

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ, ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ՄԱՐԳԱՐԻՏԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 9-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Մարգարիտա Սարգսյանս, աշխատելով որպես ՀՀ արդարադատության նախարարության քրեական օրենսդրության, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչության փորձագետ, 2022 թվականի մարտի 9-ից մինչև 2022 թվականի ապրիլի 11-ն ընկած ժամանակահատվածում կատարել եմ հետևյալ աշխատանքները.

➤ Կազմել եմ ՀՀ արդարադատության նախարարության կողմից միջազգային կառույցներին ուղարկվող պաշտոնական նամակների նախագծեր:

➤ Մասնակցել եմ ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի նախագծի վերաբերյալ քննարկումներին:

➤ Ուսումնասիրել եմ միջազգային փորձ և ըստ այդմ՝ ներկայացրել եմ ամփոփ տեղեկանքներ և վերլուծություններ քրեակատարողական օրենսդրությանն առնչվող տարբեր իրավական հարցերի և հիմնախնդիրների կապակցությամբ, մասնավորապես.

- ազատությունից զրկված անձանց առողջության պահպանում քրեակատարողական հիմնարկներում և բժշկական կազմակերպություններում,
- քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց կրթության, աշխատանքի կազմակերպման, քրեակատարողական հիմնարկների այլ գործառույթների մասնավորեցում,
- քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց հետ սոցիալական, իրավական, հոգեբանական աշխատանքների իրականացում,

➤ Պատասխանել եմ քաղաքացիներից (այդ թվում՝ դատապարտյալներից և կալանավորված անձանցից), հասարակական կազմակերպություններից, պետական մարմիններից ստացված ընթացիկ գրություններին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



ՄԱՐԳԱՐԻՏԱ ՍԱՐԳՍՅԱՆ

11.04.2022թ.